


8485



Ա. Ա. Անդրեզեվ

# Կոխակչական ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆ • 1936

1 DEC 2009  
24 SEP 2006

ՀԿՊԱ  
Ա-58

Պրոլետարիատ քայլու յերկինքների, միացել

այ.

Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ


## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԱՍԻՆ

Համբ ս(թ)կ Կենտկոմի բարտուղարի նառը Համբ(թ)կ  
Կենտկոմին կից Յա. Մ. Սվերդլովի անվան  
Պրապագանդիստների բարձրագույն դպրոցի բացմանը,  
1936 թ. փետրվարի 7-ին

12 FEB 2013

8485

Էնկերներ: Բոլորին հայտնի յե այս հսկա-  
յական գերը, վոր Յա. Մ. Սվերդլովի ան-  
վան Կոմունիստական համալսարանը խաղա-  
ցել ե մեր կուսակցության աշխատանքի ա-  
մենաբազմապիսի ասպարեզների համար կու-  
սակցական կազմեր պատրաստելու գործում:  
Յեվ առաջինը, վոր ձեր առաջիկա ամբողջ  
ուսման ընթացքում պետք ե հիշեք դուք՝  
նոր սվերդլովականներդ, դա որինակելի աշ-  
խատելն ու Սվերդլովկայի դրոշն ամուր  
պահելն ե, այնպես, վոր մի տարի և յերեք  
ամիս հետո Համամիութենական կոմունիստա-  
կան կուսակցությունն ստանա վորակյալ  
պրոպագանդիստ՝ կազմակերպիչների մի ջո-  
կատ, վորն այնքան անհրաժեշտ ե կուսակ-  
ցական պրոպագանդի գործն ել ավելի բա-  
րելավելու համար:



701  
37

А. А. АНДРЕЕВ

## О ПАРТИЙНОЙ ПРОПАГАНДЕ

Армпартиздат, Երևան

Համեկ(բ)կ Կենտկոմը լուրջ նշանակություն և տալիս Յա. Մ. Սվերդլովի անվան Պրոլագամնդիսաների բարձրագույն դպրոցին, վորը բացվում է ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, և հույս ունի, վոր այս նոր Սվերդլովկան ամբողջովին ու լիովին կարդարացնի իր վրա դրված խնդիրները և կարճ ժամանակամիջոցում կապարասարի պրոլագանդիսաների ընտիր, բոլցեիկան բարձր գաղափարականությամբ առգործած դեկավար կադրեր:

Բոլցեկների կուսակցությունը միշտ ել բարձր և գնահատել պրոլագանդիսական աշխատանքը և ուշադիր վերաբերմունք և ցուցաբերել նրան: Դրա շնորհիվ նա դաստիարակել և մարքսիզմի ու լենինիզմի վորով կոփված իր մեծաթիվ կազրերը՝ աշխատանքի բոլոր ասպարեզների համար: Բոլորիդ հայտնի յե, թե էենինն ու Ստալինն ինչպիսի մեծագույն ուշադրությամբ եյին կատարում պրոլագանդիսական աշխատանքն անլեզար խմբակներում և թե ինչպես պրոլետարական հեղափոխության հաղ-

թանակից հետո նրանք միշտ իրենց հիմնական ինդիբն եյին համարում ել ավելի բարձրացնել քաղաքական դաստիարակչական աշխատանքը կուսակցության անդամների մեջ:

Հայտնի յե նմանապես, վոր Համեկ(բ)կ Կենտկոմն ընկեր Ստալինի առաջարկով վերջին տարին մի շարք շատ կարեսր վորոշումներ ընդունեց կուսակցական աշխատանքի այդ բնագավառի վերաբերյալ վորոշումներ, վորոնք զգալիորեն բարձրացրին պրոպագանդի գործը: Այնուամենայնիվ, չի կարելի բավարար համարել մեր պրոպագանդիստների մեծ մասի պրոպագանդիսական աշխատանքը: Նա չի կարող բավարար համարվել վոչ իր թափ ու ծավալով, վոչ իր բովանդակությամբ, վոչ ել իր կազմակերպմամբ: Այդ բոլոր տեսակետներից պրոպագանդիստական աշխատանքը բացահայտորեն հետ և մնում կուսակցության գործնական աշխատանքից և ժամանակակից ինդիբներից:

Ինչո՞վ կարելի յե բացատրել պրոպագան-  
դիստական աշխատանքի թուլությունն ու  
հետ մնալը: Ակնհայտորեն, նախ նրանով,  
վոր իսկական պրոպագանդիստները քիչ են՝  
զգալիորեն աճած կուսակցական դաստիա-  
րակչական աշխատանքն սպասարկելու հա-  
մար, ինչպես և նրանով, վոր կուսակցու-  
թյան լավագույն աշխատողների զգալի մա-  
սը, զբաղված լինելով տնտեսական ու խոր-  
հըրդային այլ աշխատանքի զանազան բնա-  
գավառներում, բավականաշափ չեն ներ-  
դրավվել կուսակցության անդամների մեջ  
քաղաքական-դաստիարակչական աշխատանք  
կատարելու գործում:

Դրա հետ միասին պետք ե խոստովանել  
վոր տեղական կազմակերպություններում  
կուսակցական պրոպագանդի գործի ղեկա-  
վարումը մինչև այժմ ել գեռ չե ապահով-  
ված իսկական կազմակերպիչներով:

Այդ իսկ պատճառով ՀամԿ(բ)կ կենտ-  
կոմը վորոշեց Պրոպագանդիստների բարձ-  
րագույն դպրոց կազմակերպել, և մի շաբթ  
մարդային ու յերկըային կուսակցական կազ-

մակերպություններ իրենց նախաձեռնու-  
թյամբ ստեղծում են պրոպագանդիստական  
կադրեր պատրաստելու գոլորոշներ ու դաս-  
ընթացներ: Բայց միթե միմիայն վորակյալ  
պրոպագանդիստների պակասությամբ երա-  
ցատրվում պրոպագանդիստական աշխատան-  
քի թուլությունը: Վհչ միայն դրանով:

Պետք ե ուղղակի ասել, վոր պրոպագան-  
դիստական աշխատանքի թուլությունը բա-  
ցարվում է նաև նրանով, վոր կուսակցա-  
կան աշխատողների և կուսակցական կազ-  
մակերպությունների վարոշ մասը գեռհս  
սխալ են վերաբերվում պրոպագանդի հար-  
ցերին և, չնայած կուսակցության մի շաբք  
լուրջ վարոշումներին, մինչև այժմ ել թերա-  
գնահատում են կուսակցական աշխատան-  
քի այդ բնագավառի ամբողջ կարևորու-  
թյունը և իրականում վերջին պլանն են մզում  
կուսակցական պրոպագանդի աշխատան-  
քը: Գործնականում դա հանգում է այն բա-  
նին, վոր կուսակցական կազմակերպություն-  
ների ղեկավարներն ամբողջովին իրենց բա-  
ժիններին, կուլտուրական կազմական

գիստներին են հանձնում պըռպագանդի գործը, իսկ իրենք մի կողմն են քաշվում կուսակցական աշխատանքի այդ կարևորագույն ճակատամասն իրոք զեկավարելուց և յենթագրում են, թե հարկավոր են նախ, գույխ բերել ամեն տեսակ տնտեսական ու այլ կամպանիաներ, իսկ պըռպագանդի և կուսակցության անդամների քաղաքական դաստիարակության գործը կարող են սպասել:

Ինչից և բղխում պըռպագանդիստական աշխատանքի կարևորության այդպիսի թերագնահատումը: Բայց յերեւնութին, վոչ միայն նրանից, վոր կուսակցական կազմակերպությունները և նրանց զեկավարները գործնականորեն ծանրաբեռնված են բազմաթիվ ու բազմապիսի հարցերով: Այդ թերագնահատումը բացատրվում է նաև նրանով, վոր մեր կուսակցական աշխատուկների վորոշ մասում այսպիսի տրամադրություններ կան.—քանի վոր մեղ մոտ գործը լավ ենթանում, իշխանությունը վերցրել ու ամրացրել ենք, ստեղծել ենք մեր սոցիալիստական ինդուստրիան, գյուղում հաղթա-

նակել ե կոլտնտեսային կարգը, հաղթանակները հաջորդում են մեկը մյուսին, արտադրական պլանները կատարվում են, եւ ինչ կարիք կա առանձնապես զբաղվելու պրոպագանդով և քաղաքական դաստիարակությամբ:

Բառացի այդպիս եր դուրս գալիս, որինակը Բալտինայի թղթի կոմքինատի կուսկոմիտեյի քարտուղարի մոտ, վորը Համ. Կ(բ)Կ կենտկոմի կազմըուրոյում հաշիվ եր տալիս իր ձեռնարկության մեջ կատարվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի վիճակի մասին: Իսկ յերբ նրան սկսեցին քննադատել կոմքինատի կուսակցական դաստիարակության ասպարեզում կատարվող վատ աշխատանքի համար, վորին համապատասխան գնահատական տրվեց Համ. Կ(բ)Կ կենտկոմի ձեզ ամենքիդ հայտնի վորոշմամբ, նա, չնայած կուսակցական աշխատանքի այդ բացահայտ թերություններին, զարմանում եր, թե եւ ինչ են պահանջում իրենից, յեթե գործարանում ար-

տաղբական պլանն ընդհանուր տռմամբ կատարվում է:

Կարելի յեւ չտարակուսել վոր նա արտացոլեց կուսաշխատողների վորոշ մասի տրամադրությունը, վորոնք կուսակցական աշխատանքի վիճակը պատրաստ են գնահատել միմիայն տնտեսական ցուցանիշներով:

Ճիշտ են արդյոք այդ տրամադրությունները: Դրանք վոչ միայն սխալ, այլև ուղղակի անհանդութելի յեն: Դրանք արմատապես հակասում են մեր կուսակցության զեկավարության ամբողջ քաղաքականության ու պրակտիկային: Կուսակցական պրոպագանդի, այսինքն՝ կուսակցության անդամներին գաստիարակելու և նրանց գիտակցությունը գտղափարական ավելի բարձր մակարդակի հասցնելու գործի նշանակությունը տվյալ պահին վոչ միայն չի փոքրանում, այլ մեծանում ե և մեծանալու յի: Դրա մասին իր կենդանության ժամանակ բաղմիցս իսունել ե լենինը, դրա մասին բազմիցս հիշեցնում ե նաև ընկեր Ստալինը:

10

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՑԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԳՈՐԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՑՈՒՄ Ե ՑԵՎ  
ԱՃԵԼՈՒ ՑԵ

Ճիշտ ե, վոր մենք ԽՀԱՄ-ում հաջողությամբ վերացրինք շահագործող դասակարգերը, ճիշտ ե, վոր մենք գտնվում ենք անդասակարգ հասարակության շեմքին, սակայն ճիշտ ե նաև այն, վոր այդ անցման ժամանակ տեղի յեւ ունենում արդեն ջախջախված դասակարգային թշնամիների կատաղի դիմակրությունը մեր գործին՝ մեր սոցիալիստական շինարարության ամենաբարձրագույնի ճակատամասերում: Վերջնենք, որինակ, ստախանովյան շարժումն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, այսինք վորքան բազմապիսի փորձեր են արել թշնամիները՝ վիճեցնելու առանձին ստախանովականների հաջող աշխատանքը: Ըստնմին չպետք ե մոռանալ վոր դասակարգային սուբ պայքարը և մեր թշնամինե-

11

ըի դիմադրությունը բնավ չի սահմանափակվում միմիայցն ԽՍՀՄ շրջանակներով: Յեկայստեղից հետևում ե, վոր կուսակցությունը վոչ միայն պետք ե պահպանի, այլև ելավելի պիտի ուժեղացնի իր մարտունակությունը: Զե՞ վոր գեռ քիչ ե վերացնել շահագործող դասակարգերը, հարկավոր ե արմատախիլ անել նաև այդ դասակարգերի իդեոլոգիայի մնացորդներն աշխատավոր մասսաների գիտակցությունից, գլոբերից, դասագրքերից, գրականությունից, արվեստից և այլն: Այդ բոլորը մենք անում ենք, սակայն այդ խնդիրը չի կարելի հաջող գլուխ բերել առանց քաղաքական դաստիարակչական աշխատանքի՝ նախ և առաջ կուսակցության շարքերում: Անա թե ինչու կուսակցական պրոպագանդի խնդիրները վոչ միայն չեն նվազում, այլև ավելանում են:

Մեր կուսակցությունը, մանավանդ կոմիյերի միությունը, շարունակ համալրվել են և համալրվելու յեն բանվորների ու առաջավոր կոլտնտեսականների ավելի յերիտասարդ խա-

վերով, վորոնց մեծ մասն անմիջականորեն չի կոփիվել դասակարգային պայքարում ու քաղաքացիական պատերազմում: Նշանակում ե, կուսակցական կազմակերպությունների խնդիրն ե՝ կուսակցական պրոպագանդը լուրջ հիմքի վրա դնելով, զաստիարակել այդ մարդկանց բոլշևիկյան կոփիածության ու գաղափարականության վոգով, մեր կուսակցության պատմությամբ, այն պայքարի դասերով, վոր մղել ե բոլշևիկների կուսակցությունը նարուդնիկների, մենշևիկների, եսերների, հականեղափոխական տրոցկիստների և զինովյեվականների ու ամեն տեսակ հակակուսակցական խմբավորումների դեմ:

Եթե առաջ քաղաքական դաստիարակության և կուսակցական պրոպագանդի խընդիրները հանդում ենին գլխավորապես քաղաքի ու արդյունաբերական ձեռնարկությունների սպասարկմանը, ապա այժմ, յերբ գյուղում վերջնականապես հաղթանակեց կոլտնտեսային կարգը, բանն արժատավես փոխվում ե: Այն սահմանները, վորոնք առաջ քաղաքը բաժանում եյին գյու-

դից, ջնջվում են և ջնջվելու յեն: Գյուղն  
իր ներկա կերպարանքով, կոլտնտեսային  
կարգի հաղթանակից հետո, արդեն նման  
չե այն գյուղին, վորը գոյություն ուներ  
4—5 տարի առաջ: Կոլտնտեսային կարգի  
հաղթանակով արմատապես փոխվում են  
գյուղի կյանքի նյութական պայմանները:  
Ջնջվում ե քաղաքի և գյուղի սահմանն  
արտադրության գծով, վորովհետեւ գյուղա-  
տնտեսությունը նույնպես մեքենայական  
խոշոր արտադրություն և դարձել ջնջվում  
և սահմանը նաև կուլտուրականության տե-  
սակետից: Տեսէք, թե ինչ վիճակի մեջ ե,  
որինակ, անգրագիտության վերացման գոր-  
ծը. դպրոցական ուսուցմամբ ընդգրկված են  
բոլոր յերեխանները գլխովին, և գյուղի հա-  
սակավոր ազգաբնակության ինը տասե-  
րորդ մասն այժմ գրագետ ե: Ակներե և  
վոր յիթե մենք 1—2 տարի լրջորեն աշխա-  
տենք վերացնելու մնացած 10 միլիոն հոգու  
անգրագիտությունը, կոլտնտեսային գյուղը  
գլխովին գրագետ կդառնա:

Վերցնենք, որինակ, գյուղում կատար-

վող քաղաքական-դաստիարակչական աշխա-  
տանքը. դրա համար այժմ խրճիթ-ընթեր-  
ցարանը նեղ և գալիս: Այժմ խրճիթ-ընթեր-  
ցարանում չի կարելի պարփակել կոլտնտե-  
սային գյուղի քաղաքական-դաստիարակչա-  
կան և կուլտուրական հարաձուն աշխա-  
տանքը. դրա համար խրճիթ-ընթերցարանը  
նեղ ե: Գյուղում կատարվող կուլտուրական-  
լուսավորական և քաղաքական-դաստիարակ-  
չական աշխատանքն այժմ ավելի ու ավելի  
կառուցվելու յե քաղաքի տիպով: Կոլտնտե-  
սություններն արդեն սկսել են իրենց հա-  
մար կառուցել իրենց կոլտնտեսային ակումբ-  
ները, կիսոները, թատրոնները և այլն:  
Մենք պարտավոր ենք ընդառաջել այդ բո-  
լորին և ոգնել կոլտնտեսային գյուղին՝ ստեղ-  
ծելու կուլտուրական-լուսավորական այն-  
պիսի հիմնարկներ, վորպիսիք քաղաքի բան-  
վորն ունի: Առաջավոր կոլտնտեսականները և  
մանավանդ կոլտնտեսային յերիտասարդու-  
թյունն ուզում են, վոր իրենք ել գիտենան  
այն, ինչ վոր գիտե քաղաքի բանվորը,  
ուզում են, վոր կուսակցությունը նույնպիսի

գաստիարակություն առ նրանց, վորպիսին  
տալիս և արդյունաբերական բանվորին: Այս  
բոլորը կուսակցության առջև գտնում են կու-  
տնտեսային գյուղում քաղաքական և կու-  
տուրական-գաստիարակչական աշխատանք  
կատարելու նոր, հակայական խնդիրներ և  
զգալիորեն ավելի յել լայնացնում մեր կու-  
սակցական աշխատանքի ասպարեզը:

Ընկեր Ստալինն ստախանովյան խոր-  
հըրդակցությանն իր արտասանած ճառում  
ասաց.

«...Մտավոր աշխատանքի և ֆիզիկական  
աշխատանքի հակադրության վոչնչացմանը  
կարելի յել հասնել միմիայն բանվոր դասա-  
կարգի կուլտուրական-տեխնիկական մա-  
կարդակն ինժեներատեխնիկական աշխատող-  
ների մակարդակին հասցնելու բազայի վրա:  
Ծիծաղելի կլիներ կարծել, թե այդ բարձ-  
րացումն անիբագործելի յել: Նա միանգա-  
մայն իրագործելի յել խորհրդային հասարա-  
կակարգի պայմաններում, վորտեղ յերկրի  
արտադրողական ուժերն ազատված են կա-  
պիտալիումի կատանքներից, վորտեղ աշ-

խատանքն ազատագրված են շահագործման  
ձնշումից, վորտեղ իշխանության դլուխ և  
կանգնած բանվոր դասակարգը և վորտեղ  
բանվոր դասակարգի յերիտասարդ սերունդը  
բոլոր հնարավորություններն ունի տեխնի-  
կական բավականաչափ կրթություն ապա-  
հովելու իր համար» (Ի. Վ. Ստալին, Ստա-  
խանովյականների խորհրդակցությանն ար-  
տասանած ճառից):

Միթե դա միաժամանակ հակայական  
խնդիրներ չի առաջադրում բարձրացնելու  
նաև ստախանովյականների, կուսակցական  
և վոչ կուսակցական բոլշևիկների մեջ կա-  
տարգող քաղաքական դաստիարակչական  
ամբողջ աշխատանքը:

Յեթե առաջ կուսակցական կազմակեր-  
պություններն իրենց աշխատանքում նապա-  
տակ ենին գնում վերացնել կուսակցության  
անդամների ու բանվորների գլխավորապես  
քաղաքական տարրական անդրագիտությու-  
նը, ապա այժմ, գրա հետ միասին, անհրաժեշտ  
և կուսակցական պրոպագնդի մակարդակը  
բարձրացնել նոր, ավելի բարձր աստիճանի:



Մենք՝ չպետք են մոռանանք, վոր մեր առաջն մշտապես ծառացած են մեր կաղըների և կուսակցության անդամների մասսայի թեորիական մակարդակի բարձրացման խընդիրները։ Կարելի՞ յէ արդյոք ասել թե այդ տեսակետից մեզ մոտ գործը բարեհաջող ե, թե մեր կաղըների թեորիական մակարդակը բավարար ե։

Դժբախտաբար, մեր կաղըների թեորիական մակարդակը դեռ բացահայտորեն անբավարար ե, իսկ մենք չենք կարող հաշտվել դրա հետ։ Անհրաժեշտ ե պայքար մղել կուսակցության անդամների վորոշ մասի կողմից թեորիային ցուցաբերվող անհոգության դեմ։ Ըսկեր կենինը և ընկեր Ստալինը շատ են խոսել թե ինչ նշանակություն ունի թեորիան մեր կուսակցության համար, յուրաքանչյուր բոլշևիկի համար։ Ահա թե ինչ ե ասում ընկեր Ստալինը թեորիայի մասին։

«...Աշխատանք խարխափերով, աշխատանք խափառում՝ այս ե պրակտիկ աշխատողների վիճակը, յեթե նրանք չեն ուսումնասիրում լինինիզմը, յեթե նրանք չեն ձբգ-

տում տիրապետել լինինիզմին, յեթե նրանք չեն ցանկանում իրենց գործնական աշխատանքը զուգակցել թեորիական անհրաժեշտ պատրաստության հետ»<sup>1</sup>։

«...Անհրաժեշտ ե, վոր թեորիական աշխատանքը վոչ միայն հասնի պրակտիկ աշխատանքի հետկից, այլև անցնի նրանից՝ զինելով մեր պրակտիկներին սոցիալիզմի հաղթության համար նրանց մղած պայքարում»<sup>2</sup>։

«...Հայտնի յէ նույնապես, վոր այժմյան շատ պրակտիկ լինինիստներ այնքան ել բարեհաճ չեն դեպի թեորիան, մանավանդ այն հսկայական գործնական աշխատանքի պատճառով, վոր ըստ իրազրության նրանք ստիլված են կատարել։ Յես պետք ե հայտարարեմ, վոր այդ ավելի քան տարորինակ կարծիքը կենինի և լինինիզմի մասին միանդամայն սիսալ ե ու վոչ մի չափով չի համապատասխանում իրականությանը, վոր թեո-

<sup>1</sup> «Լինինիզմի հարցերը», եջ 190, ոսւմ. 9-րդ հրատ.

<sup>2</sup> «Լինինիզմի հարցերը», հայ. հրատ. եջ 375—376:

ըիայից խուսափելու վերաբերյալ պրակտիկ-ների ձգուումը հակասում է լենինիզմի ամբողջ վոգուն և հղի յե գործին սպառնացող մեծ վտանգներով»<sup>1</sup>:

Թեորիան մեզ հարկավոր եր բուրժուա-կան հասարակակարգը տապալելու համար, սակայն նա վոչ պակաս, այլ ավելի մեծ չափով հարկավոր է մեզ նոր հասարակա-կարգ՝ անդասակարգ սոցիալիստական հա-սարակություն ստեղծելու համար, կոմու-նիստական հասարակակարգ ստեղծելու հա-մար: Մենք այնքան ավելի արագ ու հա-ջող առաջ կդնանք և այնքան քիչ ամեն տեսակ սխաներ ու թերություններ կլինեն մեր ճանապարհին, վորքան ավելի ամուր տիրապետեն մեր կաղըերը մարքսիզմի-լե-նինիզմի թեորիային, վորքան ավելի լավ կոփիված լինեն նրանք թեորիապես Ահա թե ինչու կուսակցական պրոպագանդի գործը վոչ միայն չի սահմանափակվում, այլև պետք ե ավելի ու ավելի նոր, ավելի խոր և լայն թափ ու ծավալ ստանա:

<sup>1</sup> «Լենինիզմի հարցերը», հայ. հրատ., հջ 22:

Յեվ վերջապես, չպետք է մոռանալ կու-սակցական փաստաթղթերի արդին ավարտ-ված ստուգման արդյունքները: Չեզ, յերեխ, արդին հայտնի յեն այդ արդյունքները: Այդ ստուգման ժամանակ կուսակցությու-նից վտարվեցին զգալի թվով մարդիկ, վո-րոնք վոչ մի կապ չունեցին կուսակցության հետ և նրանց շոշափելի մասը մեր կուսակ-ցության ուղղակի թշնամիներ եյին—սքող-ված տրոցկիստներ, կուլակներ, սպիտակ-գվարդիականներ, լրտեսներ, ժուլիկներ: Իսկ մյուս կողմից կուսակցական փաստաթղթե-րի ստուգումը ցույց տվեց, վոր մեր կուսակ-ցության շատ և շատ անդամները և թեկնա-ծուները գտնվում են քաղաքական գիտե-լիքների բավականին ցածր մակարդակի վրա:

Միթե այդ չի պարտավորեցնում կու-սակցական կազմակերպություններին՝ այժմ իսկ, կուսակցական փաստաթղթերի ստուգ-ման թարմ հետքերով վերանայել կուսակ-ցական լուսավորության ամբողջ գործը, լրջո-րեն զբաղվել նրանով, ոգտագործելով ստուգ-

ման նյութերը, ոգտագործելով այն առավելությունը, վոր այժմ կուսակցության յուրաքանչյուր անդամ ավելի յե հայտնի էր կազմակերպությանը, քան ստուգումից առաջ:

Ահա թե ինչու Համեր(բ)կ կենտկոմը միանգամայն անհանդուրժելի յե համարում կուսակցական պրոպագանդի գործը թերագնահատելու և նրա նկատմամբ անուշադիր լինելու պրակտիկան և վճռաբար կպայքար բի այդպիսի տրամադրությունների դեմ:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վորոնենք են, ուրեմն, կուսակցական պրոպագանդը բարելավելու գործնական խնդիրները:

Նախ և առաջ այն, վոր յուրաքանչյուր կուսակցական կազմակերպության հարկադրենք լոմբոնել կուսակցական պրոպագանդի ամբողջ կարևորությունը և վերջ տալ նրա

թերագնահատմանը, պրոպագանդիստական աշխատանքին ցուցաբերվող սխալ վերաբերմունքին: Խսդիրն այն ե, վոր բարձրացնենք կուսակցական պրոպագանդի նշանակությունը կուսակցական աշխատանքի ամբողջ սխատեմում և, դրա հետ միասին, բարձրացնենք պրոպագանդիստի նշանակությունը: Ամբողջ պրոպագանդիստական աշխատանքը և յուրաքանչյուր պրոպագանդիստ պետք ե գտնվեն կուսակցական կազմակերպության մշտական ղեկավարության տակ: Այդ աշխատանքում ամեն մի ինքնահոս պետք ե վերացվի: Կուսակցակերպությունները պետք ե կազմակերպեն կուսակցական պրոպագանդ մղելու ընդունակ մարդկանց ուշադիր ընտրությունը: Այդպիսի մարդիկ քիչ չեն մեզ մոտ ամեն մի կազմակերպության մեջ: Մարդիկ ընտրելով կուսակցական պրոպագանդ մղելու համար՝ պետք ե ոգնելնրանց և մշտապես աշխատել նրանց վրա: Մինչդեռ մեզ մոտ հաճախ տեղական կուսակցական կազմակերպություններն իրենց անելիքը սահմանափակում են միայն

Նրանով, վոր ընտրում եւ հաստատում են պրոպագանդիստներին, իսկ թե ինչպես են կատարում նրանք իրենց աշխատանքը դադրոցներում ու խմբակներում, այդ նրանց չի վերաբերում: Դասիսաւը բյուրոկրատիկ և ձեռվական մոտեցում եւ: Դեռ քիչ եւ պրոպագանդիստ առաջ քաշելը, հարկավոր եւ ինչպես հարկն և պատրաստել նրան խմբակներում ու գպրոցներում աշխատելու համար, պետք եւ շարունակ ղեկավարել նրանց: Այս եւ խնդիրը: Միմիայն այդ պայմաններում կապահովվի խմբակներում ու գպրոցներում կատարվող աշխատանքի համապատասխան վորակը:

Վորմնք են, ուրեմն, կուսոկցական պրոպագանդի գրվածքի գլխավոր կազմակերպական թերությունները:

Առաջինն այն, վոր կուսակցական տեղական կազմակերպությունների քարտուղարները կուսակցական պրոպագանդի վիճակը հաճախ գնահատում են վիճակագրության հիման վրա, ըստ քանակի, կուսակցական լուսավորության դպրոցներում ու խմբակ-

ներում հաշվառված կուսակցության անդամների ու թեկնածուների «ընդգրկումով», առանց հետաքրքրվելու, թե նրանցից քառակիսն են իրոք սովորում, ինչպես և ինչ են սովորում: Հաճախ այդպիսի սոսկ ձեռական մոտեցման հետևանքն եւ լինում այն, վոր սովորող եւ հաշվվում այսքան մարդ, բայց իրոք հաճախողներն զգալիորեն քիչ են: Այդպես եր, որինակ, Զելյաբինսկի մարզի յերկու խոշորագույն ձեռնարկություններում Զելյաբինսկի տրակտորային գործարանում և Դաղգյահների գործարանում կուսակցության պատմությունն ուսումնասիրող խըմբակներում: Զելյաբինսկի տրակտորային գործարանի հինգ, խմբակներում հաշվվում եր 82 հոգի, իսկ պարապմունքի յեր գալիս 42 հոգի, նյութը կարգում եր 12 հոգի: Դաղգյահների գործարանի հինգ խմբակներում հաշվվում եր 123 հոգի, պարապմունքի գալիս եր միայն 59 հոգի, իսկ նյութը կարգում եր միայն 8 հոգի: Պետք եւ վերջ տալ այդ նեխված մեթոդին, ինքնախաբեյությանը և դադարել այդ-

պիսի կարեոր գործին, ինչպիսին և կուսակցական լուսավորությունը, մոտենալ «ընդգրկման» ձեական չափանիշով։ Պետք և դործի դրությունը գնահատել կուսարոպակագանդի խմբակների ու դպրոցների ցանցի աշխատանքի իրական բովանդակությամբ ու արդյունքներով։

Յերկրորդ՝ հաճախ դպրոցների ու խմբակների կոմպլեկտավորումը կատարվում և առանց ընտրության, մի խմբակում խառնվում են քաղաքական պատրաստության տարբեր մակարդակ ունեցող՝ կուսակցության անդամներն ու թեկնածուները, փոխանակ ավելի ուշադիր ընտրություն կատարելու՝ ըստ սուվորովների մակարդակի։ Այդպիսի սխալ ընտրության հետևանքն և լինում այն, վորխմբակում սովորողներից վոմանք ձանձրույթ են զգում, վորովնեաև նրանք զիտելիքների վորոշ մակարդակ ունեն, իսկ մյուսները զժվարանում են հասել նրանց հետևից՝ բավականաչափ պատրաստված չլինելու պատճառով, իսկ զա կասեցնում ե ամբողջ ուսուցումը։ Պետք և վերջ տալ դպրոցներում ու

խմբակներում վոչ շերտավորված ընտրություն կատարելու այդ պրակտիկային։

Յերրորդ՝ դպրոցների ու խմբակների աշխատանքի պրակտիկայում գոյություն ունի անկանոնություն և անսխատեմություն, այսինքն այնպիսի գրություն, յերբ պրոպագանդիստը հաճախ աշխատանքը կատարում է առանց պլանի և կուսկազմակերպության զեկավարության, իսկ դրա հետևանքն այն և լինում, վորմի շարք տարիների ընթացքում խմբակներում սովորող մարդիկ չեն կարողանում անհրաժեշտ գիտելիքներ ստանալ։ Կարելի յե հաշտվել այդպիսի պրակտիկայի հետ Վհչ Այդ բոլորը տեղի յե ունենում այն պատճառով, վոր կուսկազմակերպությունները մշտապես չեն զեկավարում խըմբակների ու դպրոցների աշխատանքը։

Կուսակցական պրոպագանդը գործնականութեն պատշաճ հիմքի վրա գնելու համար հարկավոր ե վերջ տալ այդ անկանոնություններին, իսկ յուրաքանչյուր խմբակի ու դպրոցի աշխատանքը պետք ե դնել կուսկազմակերպությունների մշտական զեկավա-

բության տակ: Կուսկոմների քարտուղարները պետք ե զիտենան և անձամբ ստուգեն, թե ինչ և ինչպես ե դասավանդվում դպրոցներում ու խմբակներում և, բացի դրանից, իրենք պետք ե զեկավարեն առանձին խմբակները: Այն ժամանակ կուսկազմակերպությունների զեկավարությունն անմիջականորեն կլապի պրոպագանդիստական աշխատանքի պրակտիկայի հետ:

Պրոպագանդիստական աշխատանքի չորրորդ և ամենակարևոր թերությունը — դահնախի կուսկազմական ուսուցման վրակաւական ցածր մակարդակն եւ Խմբակների ու դպրոցների ունկնդիրները շատ են գանգատվում, թե նրանք քիչ գիտելիքներ են ստանում, թե հաճախ դասավանդումը կատարվում ե այնպես, վոր ունկնդիրին չի հրապուրում և չի գրգում նրան ինքնուրույն աշխատանք կատարելու դրված հարցի վրա: Այսուեղից ե բղիսում հաճախ պարապմունքներին վատ հաճախելը, դպրոցներն ու խմբակներն ավարտողների քաղաքական գիտելիքների ցածր մակարդակը:

Ի՞նչ ե ցույց տալիս այդ: Այն, վոր մեր կուսկազմական լուսավորության ցանցում պարապելու մեթոդներն իսկ հաճախ սխալ են:

Մեր պրոպագանդը պետք ե լինի վոչ թե դրույթների ու ցիտատների վերացական և չոր ու ցամաք սերտումը, այլ կենդանի, հետաքրքրաշարժ ու հրապուրիչ մի պարապմունք, վորն ունկնդիրին դրդի ինքնուրույն մտածելու, ինքնուրույն աշխատանք կատարելու իր վրա, ինքնուրույն հետևող ներ ու ընդհանրացումներ անելու: Կարելի յեւ արդոք այդպիսի հիմքի վրա գնել մեր պրոպագանդը: Վոչ միայն կարելի յեւ, այլև պետք ե:

Ի՞նչպես համել դրան և ի՞նչ ե պահանջմում վրա համար մեր պրոպագանդիստից: Նախ և առաջ այն, վոր պրոպագանդիստն ինքը բավականաչափ լավ իմանա այն առարկան, վորի մասին պետք ե պատմի իր ունկնդիրներին: Բանն այդպես ե մեզ մոտ մի շարք գեպքերում: Վհչ: Հաճախ պրոպագանդիստը խմբակներին կամ առանց նախապես պատրաստվելու, վատահելով իր ընդունակու-

թյուններին ու գիտելիքներին, կամ վռաքի վրա, թուոցիկ կերպով աչքի անցկացնելով միքանի եջ կուսակցության պատմության դասագրքերից, միքանի պատրաստի ցիտատներ լենինի կամ Ստալինի աշխատություններից։ Ալղակի, թող ներվի ասել պատմական ու թեորիական «բազաժով» հաճախ մարդիկ գնում են դպրոցներն ու խմբակները՝ կուսակցության պատմությունն ու լենինիզմը դասավանդելու, բոլորովին իվեճակի չլինելով խելացի պատասխաններ տալ իրենց ունկնդիրների հարցերին։

Դասավանդումը կենդանի, հետաքրքրացարժ և ոգտակար գալձնելու համար մեր պրոպագանդիստները պետք է սովորեն շարունակ համադրել անցյալը ներկայի հետ, պատմական ու թեորիական առանձին դրույթները հագեցնել փաստերով։ Դասավանդման մեջ յերեք չի կարելի թեորիան կարել կենդանի, կոնկրետ իրականությունից։ Դժբախտաբար մեզ մոտ այնպիսի կարևոր առարկայի դասագրքերի ու դասավանդման գործը, ինչպիսին և կուսակցու-

թյան պատմությունը, նույնականացնելու վատ ե, ինչպիս և ԽՍՀՄ պատմության և ընդհանուր պատմության դասագրքերի ու դասավանդման գործը, վորոնց մասին կենտկոմի ու Ժողովությունին իրենց վորոշումներում ասել են, թե՝ «փոխանակ քաղաքացիական պատմությունը կենդանի ու հետաքրքրաշարժ ձևով դասավանդելու, շարադրելով կարևորագույն անցքերն ու փաստերն իրենց ժամանակագրական հաջորդականությամբ, բնութագրելով պատմական գործիչներին—ունկնդիրներին հրամցնում են հասարակական-տնտեսական ֆորմացիաների վերացական բնորոշումները, այդպիսով քաղաքացիական պատմության կապակցված շարադրումը նենգափոխելով սոցիոլոգիկ վեսացական սխեմաներով» (Ժողովությունի և Համկ(բ)կ կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումից)։ Պետք ե վերացնել Համկ(բ)կ պատմության դասագրքերում գոյություն ունեցող այդ թերությունը, վորպեսզի այդ առարկայի դասավանդման ամբողջ գործը կատարվի լենինի ու Ստալինի կարևորագույն աշխատություններն անմիշ

Ճականորեն, ամբողջովին և վոչ թե ցիտատ-ներով ուսումնասիրելու ուղղությամբ:

Ահա թե ինչ և պահանջվում մեր պրո-պագանդիստներից, յեթե նրանք ուզում են կրել մեր կուսակցության մեջ այդ պատվա-վոր կոչումը:

Մի կարեռը պայման ևս կա պրոպագան-դիստի լավ աշխատանքի համար: Այդ այն ե, վոր նրանք իրենց գործին վերաբերվեն վոչ թե ձեականորեն, այլ մեծագույն ուշա-գրությամբ ու սիրով: Զգայուն լինեն դեպի իրենց ունկնդիրները: Համառորեն հետա-պնդեն իրենց նպատակը: Մեր պրոպագան-դիստներն այդ տեսակետից դարձյալ միշտ պետք ե հիշեն, թե ինչպես ուշադիր կերպով եյին պրոպագանդիստական աշխատանք կա-տարում կենլին ու Ստալինը բանվորական խմբակներում:

Սրանք են, ընկերներ, մեր պրոպագան-դիստական աշխատանքի գլխավոր թերու-թյունները: Դրանք բոլորն ել անպայման կարելի յե հեշտությամբ վերացնել յեթե մենք լրջորեն զբաղվենք պրոպագանդի գոր-

ծով, առաջնակարգ դարձնենք այդ աշխա-տանքը, սկսենք ինչպես հարկն և պրոպա-գանդիստների կաղըեր ընտրել ու պատրաս-տել և պրոպագանդիստական աշխատանքի գլուխ կանգնեցնենք մեր լավագույն կու-սակցական կազմակերպիչներին:

Կուսակցությունը կենտկոմի և իր հան-ձարեղ առաջնորդի, իր առաջին կազմակեր-պիչ և պրոպագանդիստ ընկեր Ստալինի ղե-կավարությամբ կազմակերպական ու գաղա-փարական ավելի մեծ բարձրության կհասց-նի լինիսիզմի պրոպագանդը: (Բուռն, յերկա-րատեկ ծափահարություններ: Բոլորը վոտի յեն կանգնում):



Պատ. խմբ. Հ. Գասպարյան, թարգմ. Հ. Թուրշյան,  
տեխն. խմբ. Ա. Խաչատրյան, սրբ. Ա. Տ.-Միքայելյան

Գլավվիտի լիազոր № 1061, հրատ. № 365,  
պատվեր № 120, տիրաժ 5000, ինդեքս II-84  
PK

Հանձնված և արտադրության 28/III 1936 թ.  
Ստորագրված և տպագրության 28/IV 1936 թ.

ԳԻՆԵ 20

ՀՀ Ազգային գրադարան



NL0184663

371

ԳԻՒԸ 30 Կ.



Ա. Ա. ԱՆԴՐΕԵՎ  
Օ ՊԱՐΤԻՅՆՈЙ ՊՐՈՊԱГԱՆԴԵ  
Արմառտիզդատ, Էրևան